ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

19.09.2020թ. ք. Իջևան

Նախագահ՝ Գ. Ավետիսյան /դեկանի պաշտոնակատար/
Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան

Խորհրդի նիստին մասնակցում էին Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Պ. Ասիլբեկյան, Թ. Ստեփանյան, Գ. Ալեքսանյան, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Հ. Մարգարյանը, Ա. Եգանյանը, ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԽ նախագահ Լ. Մադաթյանը, ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահ Ի. Վարդանյանը, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Ա. Խոջումյանը, Ա. Ղարախանյանը:

Ֆակուլտետի խորհրդի նախագահ Գ. Ավետիսյանը բացելով ֆակուլտետի խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և ներկայացրեց օրակարգը:
Ֆակուլտետի խորհրդի անդամների կողմից բաց քվեարկությամբ միաձայն ընդունվեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. 2020-2021 ուստարվա ֆակուլտետի գիտխորհրդի նիստերի պլան-ժամանակացույցի քննարկում և հաստատում /Զեկ. Գ. Ավետիսյան/:
2. 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակների թեկնածության քննարկում /Զեկ Գ. Ավետիսյան/:

1. Լսեցին – 2020-2021 ուստարվա ֆակուլտետի գիտխորհրդի նիստերի պլան-ժամանակացույցի քննարկման և հաստատման մասին/ Զեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը նշեց, որ ֆակուլտետի գիտխորհրդի աշխատանքային պլանի կազմման նպատակը ֆակուլտետի գիտխորհրդի գործունեության կանոնակարգումն է: Այդ փաստաթուղթը շեշտադրում է այն խնդիրները, որոնք ընթացիկ ուսումնական տարվա կլինեն ֆակուլտետի գիտխորհրդի գործունեության առանցքում: Այն թույլ կտա ավելի ուղղորդված և համակարգված իրագործել ֆակուլտետի ռազմավարական ծրագիրը: Ֆակուլտետի համար առաջնահերթ նշանակություն ունեցող այս

փաստաթղթի մշակումը կհանգեցնի մյուս օղակների, մասնավորապես ամբիոնների, աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը:

Այնուհետև զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետի գիտխորհրդի 2020-2021 ուստարվա նիստերի պլան-ժամանակացույցի նախագիծը /նախագիծը կցվում է/:

Արտահայտվեցին - Ա. Պոտոսյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նրանք նշեցին, որ ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերի աշխատանքային պլանի կազմումը թույլ կտա ուղղորդված և համակարգված իրականացնել ֆակուլտետի գործունեությունը:

Միաձայն կողմ քվեարկելով՝ գիտախորհրդի կազմը հավանության արժանացրեց ֆակուլտետի գիտխորհրդի 2020-2021 ուստարվա նիստերի պլան-ժամանակացույցը:

Ղեկավարվելով ԵՊՀ ԻՄ կանոնադրության 21-րդ կետի 16 –րդ ենթակետով և ԵՊՀ ԻՄ 4-րդ կետի 16 –րդ ենթակետով՝ ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. –Հաստատել ֆակուլտետի գիտխորհրդի 2020-2021 ուստարվա նիստերի պլան-ժամանակացույցը:

2.Լսեցին.-2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակների թեկնածության քննարկման մասին /Զեկ Գ. Ավետիսյան/:

Դեկանը հիշեցրեց, որ մասնաճյուղում գործում է անվանական կրթաթոշակի նշանակման կարգ: Ղեկավարվելով ԵՊՀ ԻՄ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի բաժին 4-ի 34 կետով «Շավարշ Մարգարյան» անվանական կրթաթոշակի ներկայացվում է Ֆինանսներ /ըստ ոլորտի/ IV կուրսի ուսանողուհի Լուիզա Մադաթյանը /ցուցաբերել է չորս կիսամյակ անընդմեջ գերազանցություն և հասարակական ակտիվություն/, իսկ «Սահակ Զորափորեցի» անվանական կրթաթոշակի՝ Զբոսաշրջություն II կուրսի ուսանողուհի Լաուրա Ուլիխանյանը/ցուցաբերել է չորս կիսամյակ անընդմեջ գերազանցություն և հասարակական ակտիվություն/:

Մասնաճյուղում գործում են նաև «Վազգեն Սարգսյան», «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակներ, որոնց ներկայացված են ֆակուլտետի Զբոսաշրջություն մասնագիտության II կուրսի ուսանողուհի Իննա Ենգիբարյանը /չունի հասարակական ակտիվություն, բայց չորս կիսամյակ անընդմեջ գերազանց է/ և Ֆինանսներ/ ըստ ոլորտի/ մասնագիտության III կուրսի ուսանողուհի Դիանա Սանթրոսյանը/ցուցաբերել է երկու կիսամյակ անընդմեջ գերազանցություն և հասարակական ակտիվություն/:

Արտահայտվեցին - Պ. Ասիլբեկյանը, Գ. Հովհաննիսյանը:

Արտահայտվողները նշեցին, անվանական կրթաթոշակի ներկայացված վերոհիշյալ ուսանողները արժանի են ոչ միայն ցուցաբերած ակադեմիական առաջադիմությամբ, այլ նաև հասարակական ակտիվությամբ ու օրինակելի վարքագծով: Նրանք անդամակցում են մասնաճյուղում գործող ուսանողական ինքնակառավարման կառույցներին:

Միաձայն կողմ քվեարկելով՝ գիտախորհրդի կազմը հավանության արժանացրեց 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացողների կազմը և երաշխավորեց ներկայացնել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանը:

Ղեկավարվելով ԵՊՀ ԻՄ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի 34 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին - Հավանության արժանացնել 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի «Շավարշ Մարգարյան» «Սահակ Զորափորեցի» անվանական կրթաթոշակների հավակնորդներ Լուիզա Մադաթյանի և Լաուրա Ուլիխանյանի թեկնածությունները, «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի հավակնորդ Դիանա Սանթրոսյանի թեկնածությունը և ներկայացնել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանը:

Գիտական խորհրդի նախագահ՝ *Գ. Ավետիսյան*

Քարտուղար՝ *Ա. Ալեքսանյան*